ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/98

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Հովհաննիսյան (լիազորագիր տրված՝ 14.12.2020թ.),

քննելով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բակի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից 07.12.2020թ. ներկայացված (08.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.12.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սույն թվականի նոյեմբերի 18-ին ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով բակի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև մեր կազմակերպությունը՝ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի բացման ժամկետ է սահմանված եղել 25.11.2020թ ժամը 10:00: Հանձնաժողովը նոյեմբերի 27-ին ծանուցում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից բոլոր մասնակիցների հայտերը գնահատվել է բավարար և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները հրավիրվում են մասնակցելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որի նիստը տեղի կունենա 02.11.2020թ-ի ժամը 15:00, Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ում, հասցե՝ Ֆանարջյան 76: Այնուհետև նոյեմբերի 30-ին ի լրումն նախորդի ծանուցել է, որ բանակցությունների նիստի օրը տեղափոխվում է 03.12.2020թ-ի ժամը 12:00, Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ում, հասցե՝ Ֆանարջյան 76: Ցանկանում եմ նշել, որ ծանուցումներն եղել են ոչ պատշաճ եղանակով, այն է, անտեսելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանում է, որ «էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակով:

Դեկտեմբերի 3-ին բանակցությունների ներկայանալու նպատակով Մեր կազմակերպության ներկայացուցիչը նկատելով, որ հնարավոր է ուշանա նշված ժամին ներկայանալուց ժամը 11:49 զանգել է Մրցույթի հրավերում նշված 010 28 76 81 հեռախոսահամարով (սքրինշոթը կցվում է) հայտնել, որ մի փոքր կուշանա, որին ի

պատասխան ասվել է, որ կփորձեն սպասել: Հաշվի առնելով, որ ծանուցման մեջ հստակ գրված չի եղել, որտեղ է լինելու բանակցությունը (հարկ, սենյակ) ներկայացուցիչը նիստն անցկացվող սենյակ է մտել բանակցությունները սկսելու ժամից 3-4 րոպե ուշացումով: Ներկայացուցչին տեղեկացրել են, որ բանակցություններն ավարտվել են և կա մրցույթի հաղթող և չեն ընդունել մասնակցից նոր գնային առաջարկ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանվում է, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն փաստը, որ նախապես սահմանված չի եղել բանակցությունների վարման կարգ և նիստը տևել է կասկածելի 2 րոպե (այդ ընթացքում դժվար թե բացատրվեր բանակցությունների վարման կարգը և ստանալ նոր գնային առաջարկ) խնդրում եմ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 2.2 արձանագրությամբ «Աշ-Գոգ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը 4.1 և հրավիրել նոր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 07.12.2020թ-ին «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 11.12.2020թ. N 01/10-299 գրության, ցանկանում ենք հայտնել հետևյալը.

Ինչպես և նշվել էր բողոքում և բողոքի նիստի ժամանակ ևս ներկայացրեցինք ծանուցման մեջ հստակ գրված չի եղել, որտեղ է լինելու բանակցությունը (հարկ, սենյակ) և մեր ներկայացուցիչը նիստն անցկացվող սենյակ է մտել բանակցությունները սկսելու ժամից 3-4 րոպե ուշացումով: Այս տեղեկատվությունը հաստատել է նաև պատվիրատուն իր վերոգրյալ գրությամբ, միաժամանակ հայտնելով, որ նիստը սկսվել է 12:02 րոպե: Ուզում ենք ևս մեկ անգամ նշել, որ տվյալ ժամին եղել ենք պատվիրատուի կառույցում, բայց, քանի որ, ծանուցման մեջ հստակություն չի եղել այդ ընթացքում փնտրել ենք նիստի անցկացման վայրը (կից ներկայացնում ենք նիստի անցկացման մուտքի դռան լուսանկարը, համոզվելու համար, որ հստակություն չի եղել:

Միաժամանակ պնդելով, մեր նախապես ներկայացված դիրքորոշումը, որ տվյալ կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր կազմակերպել բանակցությունները

(հանդես գալ բացման խոսքով, ներկայացնելու բանակցությունների վարման կարգ և այլն) պնդում ենք, որ պատվիրատուն ներկայացնի ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող «Գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը» տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.12.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները 03.12.2020թ. ժամը 12:00-ին հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որի մասին պատշաճ ձևով ծանուցվել են www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

Բանակցությունների նիստը սկսելուց մի քանի րոպե առաջ, մասնակիցը զանգահարել է (առանց ներկայանալու, թե որ կազմակերպության ներկայացուցիչն է) և խնդրել 2 րոպե սպասել՝ նիստին ուշանալու պատճառով: Գնահատող հանձնաժողովը ընդառաջելով մասնակցին՝ ժամը 12:02 սկսել է բանակցությունների նիստը, որին ներկա էր մեկ մասնակից:

«Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նիստին ներկայացել է ներկա մասնակցի կողմից վերանայված գնային առաջարկը ներկայացնելուց հետո՝ ժամը 12:04 րոպեին, ինչի

արդյունքում հանձնաժողովը չթույլատրեց «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին մասնակցել գների նվազեցման շուրջ բանակցությունների նիստին»:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.12.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/18786-2020 գրության՝ Պատվիրատուն 21.12.2020թ. թիվ 01/10-326 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 ծածկագրով գործի քննության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի 03.12.2020թ. կայացած գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստը պետք է անցկացվեր նիստերի դահլիճում, քանի որ տեսաձայնագրման հնարավորությամբ հագեցած է միայն տվյալ դահլիճը: Սակայն, նիստի օրը և ժամը պատահականության սկզբունքով համընկել է երկրում տիրող արտակարգ և ռազմական դրությունով պայմանավորված հրավիրված արտահերթ նիստի հետ, որը անցկացվել է նշված դահլիճում, ուստի բանակցությունները տեղի է ունեցել աշխատասենյակում, որտեղ տեսաձայնագրելը կամ ձայնագրելը հնարավոր չէր:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. թիվ 2.2 արձանագրության տեսաձայնագրումը կամ ձայնագրությունը Պատվիրատուի կողմից ներկայացնելն անհնար է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.12.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բակի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Աշ-Գոգ» ՍՊ, «Ալեքսիմ» ՍՊ և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊ ընկերությունները:

3. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է նիստը կասեցնել մինչև 02.12.2020թ. ժամը 12:00-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ որոշվել է բանակցությունների նիստի օրը տեղափոխել 03.12.2020թ ժամը 12:00, որը տեղի կունենա ք. Երևան, Ֆանարջյան 76 հասցեում:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի շրջանակներում հրավիրված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին ներկայացել է «Աշ-Գոգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, իսկ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բանակցություններին ներկայացել է նիստը ամփոփելուց հետո, ուստի վերջինիս չի թույլատրվել ներկայացնել վերանայված գնային առաջարկ:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Աշ-Գոգ» ՍՊԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի 07.12.2020թ. ներկայացված բողոքը՝ լրացմամբ, ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 բողոքի շրջանակներում «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված**

գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. ***հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին***,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. ***յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,***

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում

գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ ***<u>գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա</u>***՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից...:

Այսպես՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բակի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Աշ-Գոգ» ՍՊ, «Ալեքսիմ» ՍՊ և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊ ընկերությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է նիստը կասեցնել մինչև 02.12.2020թ. ժամը 12:00-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ որոշվել է բանակցությունների նիստի օրը տեղափոխել 03.12.2020թ ժամը 12:00, որը տեղի կունենա ք. Երևան, Ֆանարջյան 76 հասցեում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի շրջանակներում հրավիրված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին ներկայացել է «Աշ-Գոգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, իսկ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բանակցություններին ներկայացել է նիստը ամփոփելուց հետո, ուստի վերջինիս չի թույլատրվել ներկայացնել վերանայված գնային առաջարկ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Աշ-Գոգ» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որպեսզի Պատվիրատուն ներկայացնի ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով

պահանջվող գնահատող հանձնաժողովի նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Ընկերության միջնորդությամբ պայմանավորված, ինչպես նաև Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով սահմանված պահանջներին համաձայն՝ Պատվիրատուի կողմից ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում միաժամանակյա բանակցություններ վարելու գործընթացն ուսումնասիրելու նպատակով, հիմք ընդունելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետը, այն է. «Գնահատող հանձնաժողովի՝ **նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում** և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է», Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 16.12.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/18786-2020 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 ծածկագրով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ տրամադրել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված, ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն, գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների վերաբերյալ տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.12.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/18786-2020 գրության՝ Պատվիրատուն 21.12.2020թ. թիվ 01/10-326 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 ծածկագրով գործի քննության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի 03.12.2020թ. կայացած գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստը պետք է անցկացվեր նիստերի դահլիճում, քանի որ տեսաձայնագրման հնարավորությամբ հագեցած է միայն տվյալ դահլիճը: Սակայն, նիստի օրը և ժամը պատահականության սկզբունքով համընկել է երկրում տիրող արտակարգ և ռազմական դրությունով պայմանավորված հրավիրված արտահերթ նիստի հետ, որը անցկացվել է նշված

դահլիճում, ուստի բանակցությունները տեղի է ունեցել աշխատասենյակում, որտեղ տեսաձայնագրելը կամ ձայնագրելը հնարավոր չէր:

Ելնելով վերոգրյալից՝ ***գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. թիվ 2.2 արձանագրության տեսաձայնագրումը կամ ձայնագրությունը Պատվիրատուի կողմից ներկայացնելն անհնար է***»:

Վերոգրյալով պայմանավորված հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***գնահատող հանձնաժողովի՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են***, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Այսպես՝ կարգի վերը նշված կետի հստակ պահանջն է, որ գնահատող հանձնաժողովի՝ նիստերը տեսաձայնագրվեն կամ ձայնագրվեն, հետևաբար գտնում եմ, որ դրանց բացակայության պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված իմպերատիվ պահանջը:

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ ***համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:***

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրված գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների վերաբերյալ տեսաձայնագրության կամ ձայնագրության բացակայության պայմաններում հնարավոր չէ փաստել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ

կետի 8.7-րդ ենթակետով սահմանված պահանջներին համաձայն գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների անցկացման իրավաչափությունը, ուստի գտնում եմ, որ պետք է դադարեցնել գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն կայացած միաժամանակյա բանակցությունները և բանակցությունների արդյունքներով «Աշ-Գոգ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա նոր բանակցություններ՝ հիմք ընդունելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷՅ ԷՅ ՋԻ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից 07.12.2020թ. ներկայացված բողոքը բավարարել՝

1. պարտավորեցնել ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Աշ-Գոգ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. պարտավորեցնել ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**